ՀՀ Կենտրոնական բանկի նախագահի
Որոշում N 1/450 Ա

31/07/2020

«ՀԱՅԱՍՏԱՆԻ Է
ԸՆԿԵՐՈՒ ԹՅԱՆ ԱՐԺԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐԸ
ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐԺԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐԸ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հայաստանի էկոնոմիկայի զարգացման բանկ» ԲԲԸ-ն 2020 թվականի հուլիսի 7-ին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ է ներկայացրել՝

- 2,000,000,000 ՀՀ դրամ ծավալով, 200,000 հատ, 10,000 ՀՀ դրամ անվանական արժեքով, արժեկտրոնի կիսամյակային վճարմամբ և
- 15,000,000 ԱՄՆ դոլար ծավալով, 150,000 հատ, 100 ԱՄՆ դոլար անվանական արժեքով, արժեկտրոնի կիսամյակային վճարմամբ,

անվանական արժեկտրոնային պարտատոմսերի ծրագրային ազդագրի գրանցման հայտ, ինչպես նաև համապատասխան ազդագիրը և «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով ծրագրային ազդագրի գրանցման համար պահանջվող բոլոր փաստաթղթերը: 2020 թվականի հուլիսի 23-ին «Հայաստանի էկոնոմիկայի զարգացման բանկ» ԲԲԸ-ն ներկայացրել է նաև ծրագրային ազդագրի լրացում:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասը, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածը և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովի եզրակացությունը (2020 թվականի հուլիսի 29-ի թիվ 33 արձանագրություն)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Գրանցել «Հայաստանի էկոնոմիկայի զարգացման բանկ» բաց բաժնետիրական ընկերության կողմից ներկայացված՝
   - 2,000,000,000 ՀՀ դրամ ծավալով, 200,000 հատ, 10,000 ՀՀ դրամ անվանական արժեքով, արժեկտրոնի կիսամյակային վճարմամբ և
   - 15,000,000 ԱՄՆ դոլար ծավալով, 150,000 հատ, 100 ԱՄՆ դոլար անվանական արժեքով, արժեկտրոնի կիսամյակային վճարմամբ, անվանական, արժեկտրոնային պարտատոմսերի ծրագրային ազդագիրը:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

ՄԱՐՏԻՆ ԳԱԼՍՏՅԱՆ